BookMark

Արտակ Ավանյան

Սոհեթ

Վեպ

ԵՐԵՎԱՆ
2022

BookMark

ՀՏԴ 821.19-31 Սյունե Սևադա
ԳՄԴ 84(5Հ)-44
Ս637

Ս 637 Սյունե Սևադա
Աղի թեյ: Վեպ / Սյունե Սևադա.-Եր.:Newmag, 2022.- 280 էջ:

2019-ի գարնանը երաժշտական աշխարհը ցնցվում է անսպասելի լուրից. համաշխարհային ճանաչում ունեցող երիտասարդ հայ դաշնակահար ու կոմպոզիտոր Իդան ողբերգական ավտովթարի պատճառով հեռացել է կյանքից: Մահից ամիսներ անց Հայաստանյան ամենամեծ հրատարակչության հիմնադիրը կապվում է Իդայի օգնականի ու ամենամտերիմ մարդու՝ Նենէի հետ՝ առաջարկելով Իդայի մասին կենսագրական գիրք գրել: Նենէն համաձայնում է, բայց գրվող ամեն էջի հետ բացահայտվում են մանրամասներ, որոնք ստիպում են բացել անցյալի մռայլ էջերը, նորովի ճանաչել մարդկանց ու առերեսվել սարսափելի իրականությանը...

«Աղի թեյը» պատմություն է ճակատագրական թուլությունների, ներանձնային խնդիրների, բայց և դրանց լուծման, ուժի ու ամրության մասին: Սեր, ընկերություն, ընտանիք ու... երաժշտություն: Առանցքում մարդն է, որ փորձում է գտնել իրեն ու փրկվել ի հեճուկս դժվարությունների:

ՀՏԴ 821.19-31 Սյունե Սևադա
ԳՄԴ 84(5Հ)-44

Գրքի գլխավոր գործընկեր
«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ

Telcell

ISBN 978-9939-884-62-2
Սյունե Սևադա «Աղի թեյ» © 2022, Նյու Մեգ ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են Նյու Մեգ ՍՊԸ-ին:

BookMark

Բովանդակություն

Գլուխ 1 **Կոսմետիկա** 7

Գլուխ 2 **Նենէ** 21

Գլուխ 3 **Վան** 31

Գլուխ 4 **Մի բաժակ ջուր** 43

Գլուխ 5 **Ծանիր զքեզ** 57

Գլուխ 6 **Ես և նա** 75

Գլուխ 7 **Ընտանիք** 89

Գլուխ 8 **Cherchez la femme** 103

Գլուխ 9 **Աղի** 113

Գլուխ 10 **Սեր** 139

Գլուխ 11 **Հայրեր և որդիներ** 165

Գլուխ 12 **Ինա** 199

Գլուխ 13 **Արծաթ** 217

Գլուխ 14 **Ընկերները** 249

Գլուխ 15 **Լռել թե չլռել** 267

BookMark

Գլուխ 1

Կոսմետիկա

«Կոսմետիկա» բառն ունի հունական ծագում: Kosmeo նշանակում է հարդարել, կարգի բերել: Հին հույները ցանկացած հավաք բան անվանում էին կոսմոս, ու կապ չունի՝ պետական ու տիեզերական նշանակության հմ՞ց էր, թե՞ կնոջ արտաքին կանոնիկ տեսքին վերաբերող:

BookMark

Շագանակագոյն, թե մուգ կանաչ: Չգիտեմ ինչ գույն ընտրել ծրարի համար:

Կանաչ: Թող տարբերվող լինի: Մարդիկ նկատում են մանրուքները: Իդայի համերգի հրավիրատոմսը մուգ մանուշակագույն էր՝ դրված թափանցիկ, ամուր ծրարի մեջ, որի մեջ մի քիչ նեոն կար, ու մթության մեջ ծրարը լուսավորվում էր: Էժան չէր, բայց գաղափարն իրեն արդարացրեց, ավելին՝ այդ մտքի համար լավ հոնորար ստացա ու ինձ համար նույնքան լավ օծանելիք գնեցի: Օծանելիքից դեռ մի քիչ կա: Գուցե ցանենք ծրարի մեջ, ծրարը լավ մտքերով բուրի ու… ոչ միայն: Իսկ եթե անկեղծ, միտքն ուրիշից էի թռցրել: Ո՞ւմ հետ չի պատահում:

Տարիներ առաջ էր:

Իդան երեկոյան մի հեռուստահաղորդման հյուր էր: Ես նրա անձնական օգնականն էի ու, ինչպես միշտ նման դեպքերում, մեկնված էի դիմահարդարման սենյակի անվակավոր բազկաթոռին, պտտվում էի ձանձրույթից ու չիփս ուտում՝ հաշվելով հայելին երիզող լամպերը: Ոչ ոք երբեք չի հարցնում քեզ՝ ինչո՞ւ ես ծալապատիկ նստած այստեղ, ո՞վ է քեզ թույլ տվել չիփս ուտել, ինչո՞ւ ես միացրել հեռուստացույցը կամ ինչո՞ւ

ես վերցրել ու քսել մեր խիստ թանկարժեք շրթներկը: Դիմահարդարման սենյակները սովորաբար չեն կողպվում: Ու դռները միշտ բաց են, անցնող-դարձող մարդիկ անտարբեր նայում են ներս, բայց երբեք չեն հարցնում՝ ով եմ ես ու ինչ եմ անում այդտեղ:

Ես անտեսանելի եմ:

Դիմահարդարն Իդայի դեմքին տարատեսակ փոշիներ է լցնում: Ես քաղաքավարի հարցնում եմ՝ կարո՞ղ եմ այստեղի հեռուստացույցով հետևել հաղորդմանը: Դիմահարդարները ոչինչ չեն ասում, ուղղակի թոթվում են ուսերը՝ ինչ ուզում ես, արա: Ինձ թվում է՝ չեն էլ տեսնում ինձ: Ես գլուխկոտրուկ չեմ, սովորական աղջիկ եմ՝ չիպս ուտող, որ սիրում է պտտվել աթոռին ու անվճար օգտվել լավ կոսմետիկայից:

Հերթական հարցազրույցներից մեկի ժամանակ շպարի սեղանիկին մուգ ազնվամորու գույնով շրթներկ գտա ու շուրթերս բարեհաջող ներկեցի: Փորձում եմ հնարավորին չափ կոկիկ ուտել չիպսը, մի քանի անգամ էլ հաշվեցի՝ հայելին երիզող լամպերը հաստատ տասնվեցն են: Ականջի պոչով լսում եմ Իդային: Տեսքը լավ է, խոսքը՝ հստակ: Սանրվածքը համառորեն կարճ է, ինքնավստահ քիթ ունի, ձիգ մեջք ու ձայնի գիտակից տոնայնություն: Իսկական դաշնակահարուհի-աստղ, որ գիտի հմայել ոչ միայն մատներով, այլև տեսքով: Նրա մասին ասում են՝ նա ոչ թե դաշնամուր է նվագում, այլ կախարդում է գործիքն ու հնազանդեցնում իրեն: Նա երաժշտության մոգ է, կախարդուհի, վհուկ՝ լավ իմաստով, որ, երաժշտության ցախավելը հեծած, սուրում է ստեղների ու ունկնդիրների հոգիների տակնուվրայով: Մի խոսքով, տարբեր բաներ են ասում: Ուրիշ բացատրություն չկա, թե ինչպես

կարող է փոքրիկ մի երկրի հասարակ ընտանիքի դաշնակահարուհին դառնալ համաշխարհային ճանաչում ունեցող արտիստ, ամբողջ տարին պտտվել աշխարհով մեկ ու ասես մի նպատակ ունի՝ նվաճել նախ Երկիր մոլորակի բոլոր հնարավոր բեմերը, հետո գուցե և անցում կատարի մյուս մոլորակներին: Իդայից սպասելի է:

Այդ օրը վազվզել էինք անընդմեջ: Հոգնած մատներով խաղում էի երկար մազերիս հետ, մտածում՝ գուցե մի երկու մազափունջ մանուշակագույն ներկեմ, ուսումնասիրում էի դեմքս, փորձում հասկանալ՝ ինձ կարճ սանրվածք կսազի՞: Իսկ արժի՞ քաշ հավաքել, կամ գուցե նիհարե՞մ: Եթե բախտս բերեր, իսկ դեմքս մի քիչ արտահայտիչ լիներ, ինձ կնկատեին այս բոլոր մարդիկ: Գուցե: Իմ դիմաց կարմիր, թավշեկազմ նոթատետր է՝ Իդայի օրերի մանրամասն ժամանակագրությամբ: Ցմփոր-ոիկ նոթատետր՝ թերթելուց մգացած էջերով ու կպչուններով: Նայում եմ հաջորդ օրվա անելիքների երկարացանկը. կախվելս նորից պիտի հետաձգեմ, ֆիզիկապես չեմ հասցնի:

Որսացի Իդայի ձայնը: Ասում էր՝ երաժշտությունն ասես լույս լինի, որ կարողանում է թափանցել մարդկանց հոգիների մեջ մաշկի ծակոտիներով ու երակներով: Հանդիսատեսը ծափահարեց: Նայեցի հայելու մեջ: Մազերիս գունավորումից ես դժվար թե տեսանելի դառնամ, բայց այ Իդայի այս ձևակերպումը պիտի ֆիզիկական մարմին ստանա. անդեմ ու անհետաքրքիր հրավիրատոմսերը կներկենք մանուշակագույն:

Հայաստանի մենահամերգին դեռ կես տարի կա: Երեք ամիս անց ծրարները մեզ մոտ են. անվանական ներդիրը՝ մանուշակագույն, ծրարը՝ թափանցիկ, նեոնային բարալիկ լույսերով: Երակների պես:

Համերգասրահի աթոռներն այնպես ենք դասավորել, որ ճյուղերի պես տարածվեն ամբողջ սրահում: Հյուրերին հատուկ խնդրել ենք հրավիրատոմսերը ձեռքում պահել: Երբ լույսերն անջատեցին, ու համերգը սկսվեց, տպավորություն էր, թե լուսե երակներով ենք ողողված: Լուսանկարներն ազդեցիկ էին: Իդան հուզվել էր: Ասաց՝ ինձ վաղուց ոչ ոք չէր լսել: Երաժշտությունս լսում են, ինձ՝ չէ: Իսկ դու հարցազրույցիս մի նախադասությունը դարձրեցիր երաժշտական պերֆորմանս՝ սկզբից հորինելով ծրարը, հետո մարդկանց դարձնելով կենդանի երակ, որի ներսով երաժշտություն էր հոսում: Ասաց՝ ուրիշներն ինձ չեն տեսնում, բայց դու տեսար:

Այդ օրը հասկացա, որ մարդիկ այնքան են հմտացել անտարբերության մեջ, որ կարողանում են չտեսնել նաև ձայնը: Մարդիկ չեն լսում՝ ինչ են լսում:

• • •

Մի քանի ամիս անց Իդայի տան հայելիները կծածկեմ սպիտակ սավաններով ու կհիշեմ մենահամերգի օրը: Համերգի ձայնագրությունը կա: Երակ դարձած մարդկանց լուսանկարները՝ կա: Միայն Իդան չկա: Վերջին դրվագը, որ հիշում եմ Իդայից, ձեռքերն են՝ իր նվագած երաժշտության պես հոսուն ու մարմարե, սառած երակներով:

Սառած երաժշտությամբ: Սառցե:

Մեռած ձեռքերով Իդա:

Հանգուցյալին փոսն իջեցնելուց առաջ կանանց հեռացնում են տարածքից: Մնում են միայն տղամարդիկ: Ինձ մոռանում են

հեռացնել: Ինձ նորից չեն նկատում: Նստում եմ հարևան գերեզ-մանոցի եզրաքարին: Գրկում եմ ուսերս: Կամաց լաց եմ լինում:

Վթարից հետո Իդայի մարմինն անճանաչելի էր: Մարմինը ծածկել էին սպիտակ մետաքսով: Միայն ձեռքերն էին երևում, որովհետև միայն ձեռքերն էին անվնաս մնացել: Սատանան գողացավ նրա կյանքը, բայց անզոր գտնվեց վնասել այն ձեռքերը, որոնք այնպիսի երաժշտություն էին ստեղծում, որ երբեմն թվում էր՝ Աստված ինքը ամֆիթատրոնում տոմս է գնում ու գալիս լսելու: Ու մարդիկ գալիս, շոյում էին Իդայի բա-րակ, երկար մատները՝ սառցե հանգած քնքշանք:

Իդան մահացավ ապրիլին: Օրերն անցնում էին աննկատ ու արագ, կարճ, որքան այս տողերի միջև տարածությունն է: Ես շարունակում էի պատասխանել ցավակցական նամակներին ու փորձում ավարտին հասցնել կիսատ թողած ծրագրերը:

Անծանոթ համարից զանգ ստացա:

Սրճարանում սպասում էր ինձ: Թեթևակի ճերմակները հուշում էին, որ քառասունն անց է ու ավելի երիտասարդ տա-րիքում, հավանաբար, հուզախռիվ մազեր է ունեցել: Հետո կիմանամ, որ այս ձևակերպումն այնքան բնորոշ չէր նրա մա-զերին, որքան բնավորությանը:

Ուշադիր լսելիս հայացքն իրար էր հավաքում, շուրթերը դառնում էին մի գիծ: Ձայնը համոզիչ էր: Դառը կրկնակի էսպրեսոյից կում արեց, ասաց՝ գիտեմ, որ Իդայի աջ ձեռքն ես եղել: Հարցրեցի՝ ծանո՞թ ենք, կարծես Ձեզ ինչ-որ տեղ տեսել եմ: Չէ, ասաց՝ ծխախոտի տուփը պտտելով ձեռքի մեջ: Հետո ասաց՝ ցավակցում եմ: Գիտեմ՝ շատ կապված էիք:

Իդայի՞ն էիք ծանոթ՝ հարցրի:

Այո, ընդհանուր բաներ ունեինք: Ինքը սիրում էր կարդալ:

Իսկ ես հրատարակիչ եմ:

Հա, իրոք, սիրում էր. տանը մեծ գրադարան ունի, տարբեր լեզուներով:

Գիտեմ, շատ էր գրքերից մեջբերումներ անում. փորձում է թեթևակի ժպտալ:

Դե, հա, հրատարակիչ եք, կնկատեիք: Ու հա, շատ մտերիմ էինք, նրա օգնականն էի ամեն հարցում:

Ասում է՝ ուզում եմ՝ կենսագրական գիրք գրես նրա մասին:

Գրող չեմ, ասում եմ:

Ժպտում է՝ դու մտերիմ ես եղել նրա հետ: Այն, ինչ դու գիտես, ոչ ոք չգիտի: Իսկ Իդան մեծություն էր նաև մեր երկրի սահմաններից դուրս:

Չեմ ժխտում, ձեռքումս պտտում եմ բաժակը: Մտածում եմ: Սրճարանում շատ մարդ չկա, հաճելի, մեղմ երաժշտություն է: Հատակը պատել են հետաքրքիր զոլեր ունեցող քարերով: Աչքս ընկնում է նրա սպորտային կոշիկներին. յուրօրինակ մուգ կապույտ երանգավորմամբ են, գրեթե չհանդիպող, հաստատ էքսկլյուզիվ հավաքածուից է: Մանր սկանդալներից զզվում եմ, ոչ մի կեղտոտ պատմություն չեմ հորինելու՝ ասում եմ, ունակ չեմ նման բաների, իսկ հիմա երևի հենց էդպիսի մի բան են ուզում կարդալ:

Ալեքսը քերում է կոկորդը՝ նման բան քեզ չէի առաջարկի: Իմ լսարանն անկիրթ ու սենսացիա փնտրող մարդիկ չեն: Լուրջ գիրք եմ ուզում՝ Իդային համահունչ, երկրի համար մեկ երաժշտին հարիր, որ հետո նաև թարգմանվի այլ լեզուներով: Այս փուլում քո համաձայնությունն է պետք:

Կարող եմ, իհարկե, փորձել, բայց չեմ խոստանում, որ կստացվի: Փոքր ժամանակ լավ շարադրություններ էի գրում,

Իդայի գրադարանից էլ ակտիվ օգտվել եմ, բայց գրականության հետ կապս այդքանով սահմանափակվում է:

Տեխնիկական հարցերով քեզ կօգնեմ, մի՛ անհանգստացիր: Կլինեմ գործընկերդ, համատեղ կքննարկենք նյութերը, քո նշումները, ամեն ինչ:

Ալեքսին ուզում ես հավատալ: Երբ հետը խոսում ես, ուղղակի ուզում ես հավատալ:

Իսկ ի՞նչ գրեմ: Չեմ կարծում, որ նրա մասին պետք է ստանդարտ կենսագրական գիրք լինի, ինքն էդպիսին չէր:

Հա, ստանդարտ մարդ չէր, Ալեքսն աթոռն առաջ է քաշում: Դա ակնհայտ էր թեկուզ մեկ անգամ նրան տեսնելուց հետո, ու ես էլ չեմ ուզում սովորական կենսագրական, թե չէ կարող էինք լրագրողական հետաքննության պես մի բան անել: Շնչող տեքստ եմ ուզում՝ Իդային իսկապես ճանաչողի աչքով: Պարբերաբար կապի մեջ կլինենք, ընթացքում կհանդիպենք-կքննարկենք, կարծում եմ՝ կստացվի:

Չգիտեմ՝ ռիսկս կհերիքի, թե չէ:

Քանի՞ տարեկան ես, փոքր ես երևում:

Քսանյոթ: Դուք երևի քառասունն անց եք, բայց չի երևում:

Ծիծաղում է: Լավ կլինի, որ մեկ տարում հասցնենք: Իհարկե, ցանկալի կլինի ավելի շուտ, բայց հասկանում եմ՝ աշխատանքի ծավալը մեծ է:

Ես չգիտեմ՝ Իդային ոնց պետք է ուսումնասիրեմ:

Կօգնեմ, ասում է: Լավ թիմ ունենք, օգնականներ, կանենք: Համաձա՞յն ես:

Համաձայն եմ: Որովհետև չգիտեմ՝ էլ ինչ կարող եմ անել Իդայի համար, որ ինչ-որ կերպ հատուցեմ նրա տվածն ու լցնեմ դատարկությունն էս պահի: